

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Վ Ո Ր Կ Ա Ր Գ

ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆԸ ՋՈՒԳԱՀԵՌ ԱՅԼ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐՈՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

Քննարկվել և ընդունվել է ՎՊՄԻ գիտխորհրդում

(արձանագր. թիվ _4_ “_08_ “_05_ 2009թ.)

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1 ՎՊՄԻ-ի հիմնական կրթությանը զուգահեռ այլ մասնագիտացումներով ուսուցման համակարգը կազմակերպվում է համաձայն “Կրթության մասին” ՀՀ օրենքի թիվ 26 հոդվածի, թիվ 49 հոդվածի 8-րդ կետի, “Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին” ՀՀ օրենքի թիվ 6 հոդվածի 1.4 և 2.8 կետերի, թիվ 10 հոդվածի 3 կետի, թիվ 17 հոդվածի 3.1 և 3.3 կետերի, ՎՊՄԻ կանոնադրության 1.4 և 1.10 կետերի, ինչպես նաև ՎՊՄԻ ռեկտորի համապատասխան հրամանի:
- 1.2 ՎՊՄԻ-ի հիմնական կրթությանը զուգահեռ այլ մասնագիտացումներով ուսուցման համակարգը չի ենթադրում շահույթի հետապնդում և վարձավճարներն ամբողջությամբ ուղղվում են միայն համակարգի կազմակերպման ու զարգացման աշխատանքներին:
- 1.3 ՎՊՄԻ-ում հիմնական կրթությանը զուգահեռ այլ մասնագիտացումների ուսուցումն իրականացվում է Բարձրագույն մասնագիտական կրթության չափորոշիչներով սահմանված հիմնական կրթական ծրագրերի շրջանակներից դուրս, 2 տարի ժամկետով, վճարովի հիմունքներով:

1.4 Հիմնական կրթությանը զուգահեռ այլ մասնագիտացումներով ուսուցման կրթական ծառայությունների տրամադրման կազմակերպումը, տնտեսական, ֆինանսական ապահովումն ու կատարման վերահսկողությունը, միջֆակուլտետային փոխգործողության կազմակերպումը, կրթական ծառայությունների տրամադրման գործում շահագրգիռ այլ կազմակերպությունների հետ համագործակցությունն իրականացնում է ՎՊՄԻ-ի ուսումնական վարչությունը:

1.5 Հիմնական կրթությանը զուգահեռ այլ մասնագիտացումների դասընթացներին կարող են դիմել.

- ՎՊՄԻ-ի բակալավրիատի 3-րդ և 4-րդ կուրսերի այն ուսանողները, որոնց երկու նախորդ ուսումնական տարիների ուսուցման արդյունքների միջին գնահատականը կազմում է “3,5” և ավելի միավոր՝ անկախ ֆակուլտետից և մասնագիտությունից,
- ՀՀ պետական և հավատարմագրված այլ բուհերի բակալավրիատի բարձր առաջադիմություն ունեցող 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողները,
- ՎՊՄԻ-ի և այլ բուհերի մագիստրատուրայում սովորող ուսանողները,
- ՀՀ և արտերկրի այն քաղաքացիները, որոնք ունեն բակալավրի, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում:

1.6 Հիմնական կրթությանը զուգահեռ այլ մասնագիտացումների դասընթացներին մասնակցությունը կազմակերպվում է վերը նշված քաղաքացիների գրավոր դիմումների հիման վրա:

2. Հիմնական նպատակները և խնդիրները

2.1. Աշխատաշուկայի պահանջներին համապատասխանող լայն որակավորում ունեցող մասնագետների պատրաստում՝ ուսուցման հեղինակային ծրագրերի, անհատական մեթոդիկաների, ուսուցման և գիտելիքների ստուգման ակտիվ մեթոդների կիրառման միջոցով, այդ թվում նաև տեխնիկական միջոցների օգտագործմամբ,

2.2. Բարձրագույն կրթություն ունեցող անձանց համար “հարատև կրթության” (LLL) հնարավորության ապահովում,

2.3. ՎՊՄԻ-ի պրոֆեսորադասախոսական և օժանդակ անձնակազմի նյութական վիճակի ու սոցիալական պաշտպանվածության մակարդակի բարձրացում:

3. Դասընթացների կազմակերպումը և կարգը

- 3.1. Հիմնական կրթությանը զուգահեռ այլ մասնագիտացումների դասընթացների ուսումնական ծանրաբեռնվածությունը կազմում է 40-45 կրեդիտային միավոր (յուրաքանչյուր կիսամյակում 10-12 կրեդիտային միավոր)՝ ներառյալ ուսումնական պրակտիկան, կուրսային աշխատանքները և ավարտական որակավորումը:
- 3.2. Դասընթացներն իրականացվում են հիմնական կրթական ծրագրերի դասացուցակով անցկացվող պարապմունքներից դուրս: Դասընթացների ուսումնական պլանները, անցկացման ժամանակացույցը և դասացուցակը համաձայնեցվում են ՎՊՄԻ-ի ուսումնական վարչության հետ և հաստատվում են ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից:
- 3.3. Դիմումները ներկայացվում են հատուկ ձևաթերթերով, իրավական և ֆինանսական պայմանները ձևակերպվում են՝ համաձայն պայմանագրի:
- 3.4. Այլ բուհերի ուսանողները դիմումի հետ ներկայացնում են առաջադիմության մասին տեղեկանք, իսկ բարձրագույն կրթություն ունեցող անձիք՝ դիպլոմի հաստատված պատճեն:
- 3.5. Ներկայացված փաստաթղթերը ստուգվում են ուսումնական վարչությունում, համաձայնեցվում են ուսումնական վարչության պետի և պրոռեկտորների հետ, կնքվում են ուսումնական վարչության կնիքով և գրանցվում են հատուկ գրանցամատյանում:
- 3.6. Դիմումներն ընդունելու վերջնաժամկետից հետո, երկու շաբաթվա ընթացքում, դիմումների հիման վրա ռեկտորատը քննարկում և ընդունում է համապատասխան որոշում՝ տվյալ դասընթացների կազմակերպման նպատակահարմարության մասին (ուսումնական խմբում ուսանողների թիվը պետք է լինի տասնհինգից ոչ պակաս):
- 3.7. Պրոֆեսորադասախոսական անձնակազմը դասընթացների անցկացմանը մասնակցում է կամավոր հիմունքներով: Հիմնական կրթությանը զուգահեռ այլ մասնագիտացումների դասընթացներում դասավանդող պրոֆեսորադասախոսական անձնակազմը ընտրվում է՝ ելնելով տվյալ դասընթացների

ծրագրերից, ամբիոնի վարիչների և ֆակուլտետների ղեկավարների առաջարկով:

- 3.8. *Դիմորդներն իրավունք ունեն նախապես ծանոթանալու տվյալ դասընթացների համար առաջարկված պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչների հետ և առաջարկել իրենց կողմից հավանության արժանացած թեկնածուներին՝ տվյալ ծրագրով դասախոսություններ անցկացնելու համար:*
- 3.9. *ՎՊՄԻ-ի ղեկավարությունը պարտավոր է հաշվի առնել դիմորդների ցանկությունները՝ դասընթացների պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընտրության հարցում (նախապատվությունը տալով խմբի մեծամասնության կարծիքին):*
- 3.10. Նշանակված դասախոսը պարտավոր է լրիվ ծավալով կատարել դասընթացների ծրագրով նախատեսած ուսումնական աշխատանքները:
- 3.11. Վերը նշված կետերի պահանջները կատարելուց հետո ռեկտորի հրամանով հաստատվում են դասընթացների ուղղվածությունը, անցկացման ժամկետները, ժամանակը և տեղը, դասընթացների վճարի գումարը, ինչպես նաև դասավանդող անձնակազմի ցուցակը:
- 3.12. Դասընթացներում ընդգրկված ուսանողը վճարում է ուսման վարձը և ստանում է փաստաթուղթ (ստուգման գրքույկ)՝ ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորի և ուսումնական վարչության պետի ստորագրությամբ ու կնիքով: Տվյալ փաստաթուղթը հիմք է ծառայում՝ ուսանողին նշված ուղղությամբ նշված ժամկետներում դասընթացներում ընդգրկվելու համար:
- 3.13. Դասընթացների ընթացքում և ավարտական ատեստավորման ժամանակ ուսանողի կրթական արդյունքները գրանցվում են հատուկ ձևաթերթերում և նրա ստուգման գրքույկում:
- 3.14. Ուսանողի ավարտական գնահատականը գրանցվում է նրա ստուգման գրքույկում, ստորագրվում դասախոսի և ուսանողի կողմից, իսկ լրացված ստուգման գրքույկը պարտադիր հանձնվում է ուսումնական վարչություն:
- 3.15. Ավարտելուց հետո ուսանողին տրվում է ընդունված նմուշի հավաստագիր:

4. Ֆինանսավորումը և հաշվարկները

- 4.1. Հիմնական կրթությանը զուգահեռ այլ մասնագիտացումների դասընթացների կազմակերպման ֆինանսավորումը իրականացվում է կրթական ծառայություններ ստանալու ցանկություն հայտնած և սույն կարգում նշված ուսանողների ու այլ քաղաքացիների դրամային վճարումներից:
- 4.2. Դասընթացների վճարի չափը որոշվում է հաշվապահության կողմից հաշվարկված նախահաշվի հիման վրա՝ հաշվի առնելով փաստացի մուտքերը և ծախսերը: Կրթական ծառայությունների վճարի չափը հաստատվում է ռեկտորի համապատասխան հրամանով:
- 4.3. Դասընթացներում ընդգրկված յուրաքանչյուր աշխատակցի վարձատրությունը իրականացվում է նախահաշվի հիման վրա՝ ոչ պակաս, քան ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափով և վճարվում է ՎՊՄԻ-ի ուսումնական վարչության ներկայացնելուց հետո՝ ինստիտուտի հաշվապահության կողմից՝ հավելավճարների կամ այլ վճարումների ձևով:

5. Մասնակիցների իրավունքները և պարտականությունները

- 5.1. Հիմնական կրթությանը զուգահեռ այլ մասնագիտացումների դասընթացների դասախոսները նշանակվում են ՎՊՄԻ-ի պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամներից, կամ հրավիրվում են այլ կազմակերպություններից՝ համաձայն ռեկտորի հրամանի:
- 5.2. Դասախոսն իրավունք ունի.
- մշակել և ներկայացնել առաջարկություններ՝ կրթական ծառայությունների տրամադրման ձևերի և մեթոդների կատարելագործման ուղղությամբ,
 - ընտրել կրթական ծառայությունների տրամադրման նպատակներին և խնդիրներին համապատասխանող ուսուցման մեթոդներ և ձևեր:
- 5.3. Դասախոսը պարտավոր է.
- մինչև ուսումնական գործընթացի սկիզբը համապատասխան ամբիոնի քննակմանն ու հաստատմանը ներկայացնել տվյալ դասընթացի առարկայական նկարագիրը և կարդացվելիք դասախոսությունների տեքստերը:
 - կատարել ուսուցման բարձր որակին համապատասխանող ուսումնական և մեթոդական աշխատանք,

- ժամանակին (յուրաքանչյուր ամսվա 20-ին) համապատասխան ծառայությանը հանձնել տեղեկություններ՝ կրթական ծառայությունների կատարման մասին,

- պահպանել սույն կարգի պահանջները:

5.4. Ուսանողն իրավունք ունի.

- ստանալ ՎՊՄԻ լրացուցիչ մասնագիտացման ուսումնական պլաններին համապատասխանող կրթական ծառայություններ,

- օգտվել ՎՊՄԻ-ի կրթական ռեսուրսներից (գրադարան, ընթերցասրահ, լաբորատորիաներ, կաբինետներ և այլն):

5.5. Ուսանողը պարտավոր է.

- պայմանագրում նշված ժամկետներում մուծել կրթական ծառայությունների համար սահմանված գումարը,

- կատարել սույն կարգի պահանջները,

- ենթարկվել ինստիտուտի ներքին կարգապահական կանոններին:

6. Նյութատեխնիկական և մեթոդական ապահովում

6.1. Հիմնական կրթությանը զուգահեռ այլ մասնագիտացումների դասընթացներն իրականացվում են ՎՊՄԻ-ում գոյություն ունեցող ուսումնա-լաբորատոր բազայի օգտագործմամբ՝ հաշվի առնելով սույն կարգի 3.2 և 5.4 կետերը:

6.2. Կրթական ծառայությունների տրամադրման մեթոդական և օժանդակ ապահովման հետ կապված աշխատանքները (բազմացման աշխատանքներ, առաջադրանքների, թեստերի մշակում և այլն, լսարանների նախապատրաստում) անցկացվում են ուսումնական վարչության կողմից՝ պայմանագրային հիմունքներով ինստիտուտի աշխատակիցների ընդգրկմամբ:

հավելված 1

Դիմումի ձև

հավելված 2

պայմանագրի ձև